


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 10 ՄԶԸ.
Պոլսոյ համար 2 ՄԶԸ.
Վեցամս. Կ. Պոլսոյ համար 5 ՄԶԸ.
Պոլսոյ համար 1 ՄԶԸ.
Օտար երկիրներու համար 50 Ֆր.
Մանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուշ է. աւելի անգամներու
համար գտտ սակարկութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ՀԱՐԱԹ

ՀԱՆԱՊԱՐԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 12 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հելլենական խնդիրը կըբացայայտէ
գիւտնադիտութիւնն, և տակաւին
լուծումն անորոշ է : Կըսուի թէ մայ-
րաքաղաքիս գեապանները խորհուրդ-
կամ գումարում մը կազմելով յորդ-սր
պիտի տան Բ. Դրան, որպէս զի վե-
հաժողովին 13րդ ատենագրութեան
համեմատ Յունաստանի հետ համա-
ձայնի : Այս գումարումը կատարեալ
դեպքանախորհուրդ մը չհամարուի,
սակայն կընայ նմանութիւն ունենալ
անոր : Բայց պիտի յաջողի : — Կա-
կածելի կը թուի : Դադողի արտաքին
գործոց նախարար Պ. Վատինկիթին
աշխարհափարութեան կուսակցից 1ը
թան լրագիրը կը տարակուսի Բ. Դը-
րան կամիլին երկիր տալու տրամա-
դրութեան վրայ, մանաւանդ որ,
ինչպէս արդէն մեք ևս ըսած էինք,
Պէտքի զաշխարհիկ այս մասին պար-
տաւորիչ հարկ մը չգնեն Բ. Դրան
վրայ : Կերեւի որ Պ. Վատինկիթին ա-
ւելի ազդուութեամբ պիտի պաշտ-
պանէր Հելլենաց պահանջն, և գու-
ցէ յաջողէր անոր ընդունելութիւնն
առաւել պարտաւորիչ ընելու, սա-
կայն լորտ Պիքոնիլիտ հակառակեր
է իրեն, չուզելով որ Յունաստան
մեծնայ : Թեապիւր յոյն երիտա-
սարդք, անցեալները լորտ Պիքոնի-
լիտի Հելլենաց համար աննպաստ
խօսքեր ընելէն աւելի զայրացած,
Չատիկին օրն անոր պատկերն հրա-
ցանի բռնէր ու այրեր են, ինչպէս
պատմութեամբ է նաև Անգլիոյ Կապուտ
տեսարակին մէջ : Բայց Անգլիացոց
աղաատական մտքը լորտ Պիքոնիլիտի
ընթացքէն դժգոհելով գումարում
ներ ընել սկսաւ, որպէս զի վեհա-
ժողովին 13րդ ատենագրութեան հա-
մեմատ Հելլենաց պահանջը գործա-
դրելու համար Բ. Դրան քով իւրագ-
դեցութիւնն չի գործ գնելու ստիպէ
նախարարութիւնը : Մինչդեռ գաշ-
նագրին ընդհանուր շահուց վերա-
բերելով յորդաւանները տակաւին գոր-
ծադրութեան պէտք ունին, խիստ
զարմանալի է որ Հելլենական դատն
այսչափ աղքատ պաշտպանութիւն կը
գտնէ : Բայց պէտք չէ մոռնալ որ
Հելլենք իրապէս կը պատրաստուին
Եւրոպիոյ հանգիստը վրդովելու : Ե-
թէ իրենց ձայնը չլսուի : Փոխառու-
թիւն մը ըրին Հելլենք և ռազմամը-
թերը կը գիգեն ու բանակներ կը կազ-
մեն : Միւս կողմէ, Ալպանիացիք ալ
կը շարժին և Կիպրոսէն մինչև Ա-
թինք երթալ : Եւրոպիոյ բազմաքն
արիւնհեղութեանց առաջն առնուլ
է, և մասնաւորապէս Գաղղիա Հելլե-
նաց խնդիրն առաջ տանելու կ'աշ-

խառնի, քանզի Պ. Վատինկիթին ներ-
կայած էր զայն վեհաժողովին, ուս-
տի և անոր անյաջողութիւնը կընայ-
իւր նախարարութեան անկմանն իսկ
պատճառ տալ :

Ալպանիոյ պատուիրակներն Եւ-
րոպիոյ մայրաքաղաքները կը շրջին,
բայց իրենց ձայնը լսելի ընել տալու
համար Հելլենաց չափ դիւրութիւն
չունին : Հելլենք նիւթական և բա-
րոյական յարաբերութիւններ հաս-
տատած են Եւրոպիոյ հետ, և իրենց
անկախութեանն չի վեր ափնչալի յա-
ռաջդիմութիւն ըրած են, որ այսօր
ւան օրս այս նոր շնորհներուն իրա-
ւունք կուտայ իրենց Եւրոպիոյ առջև :
Ոչ միայն Աթինքի մէջ համալսարան-
ներ և վարժարաններ հիմնուած են,
ուրկէ Հելլենական գրականութիւնն
իւր լոյսը կը սփռէ Յունաստանի գա-
ւառաց մէջ, այլ և իբր Ալպանիա զոյց
տրուած երկիրներու մէջ, ինչպէս է
Եանես, ուր Հելլենաքէն շատ յա-
ռաջ գնացած է Յունական վարժա-
րանաց միջոցաւ, և իսլամ Ալպանիա-
ցոց ամենէն ուսումնականներն այն
գաղութաց մէջ կը թուած ըլլալով խիստ
լաւ ուսած են Յունարէնը : Ասոր փո-
խարէն ինչ կընան զոյց տալ Ալպա-
նիացիք իբր յառաջդիմութիւն : —
Գրեթէ ոչինչ : Բարբարիկ լեզու մը,
որուն համար տառեր հնարելու ջանք
կըլինի տակաւին : Գաղութն աւել, վա-
ճառականութիւն երբեք : Ուստի Սլ-
պանիացիք անժիւտիկ քաջութիւն մը
երկար հրացաններու դանակներ և
հին ատրճառակներ միայն կընան ցուց-
նել, և ոչ քաղաքակրթական նշան-
ներ : Իրենց ձայնը պէտք էր լսել ի-
նել ընդհանուր շահուց սկզբամբք,
որք կը պահանջեն ոչ թէ մասնաւոր
տարրի պաշտպանութիւնն, ինչպէս
է Հելլենականն, այլ ընդհանուր տա-
րրաց հաւատարմութիւնը, յամանակ
մ'Եւրոպա այս աշխարհափարութիւ-
նը բռնած էր, և բնաւ չէր քաջալը-
րէր Հելլենաց պահանջները : Աս-
կայն հիմայ յայտնապէս կը պաշտ-
նէ զանոնք : Մեք՝ որ աւելի ընդհա-
նուր շահուց պաշտպանութեան կող-
մին եմք, քանզի մեր շահերն ևս հոն
են, անցեալները մասնաւորապէս դա-
նոնք պաշտպանելու որդարութեան
վրայ կը պնդէինք : սակայն ամեն բան
կը ցուցնէ որ Եւրոպա իւր հին աշ-
խարհափարութեան չպիտի դառնայ
ի մօտոյ : Նոյն իսկ Անգլիոյ նախա-
րարք՝ հասարակաց կարծեաց ըստի
պոմմերէն հարկադրեալ Յունաս-
տանի հակառակ գիւրք մը չպիտի
կրնան բռնել : Եւրոպա կը հետին թէ
Հելլենք Եւրոպիոյ առջև բարոյապէս
իրենց դատը յաճած են և միայն գոր-
ծադրութիւնը մնացած է :

Անգլիական Կապուտ տեսարակն
ուրիշ իրողութիւն մ'ալ չի վեր կը
հանէ : Սաֆիլթ վաշային Սեմ—Ե-

պարքոտութեան անկու մը Բոսկորիցա-
յի խնդրոյն համար է եղեր : Սաֆիլթ
վաշա, իբրեւ հայրենասէր Օմանեան
նախարար, Բոսկորիցայի Ալպանիա-
ցիները Գարատալի զոհելու հաւա-
նութիւն չէր տուած : Բայց մեծ տե-
րութեանց միջամտութիւնը Սլաւի-
խանութեան մը շահեցուց այն քա-
ղաքն, ըստ Պէտրլինի գաշնագրին :
Եւրոպական տէրութեանց թուր-
քիոյ նկատմամբ Նոյն իսկ ի ֆլա-
րնդ-հանուր շահուց այսչափ աննպաստ
աշխարհափարութիւն բռնելուն պատ-
ճառ տուած է թուրքիոյ անբարե-
կարգ վիճակն : Աստի պարտք կը հա-
մարիմը ուշադրութիւն հրուիրել
մերթ ընդ մերթ ներքին վիճակին
բարեփոխման անհրաժեշտ հարկին վը-
րայ, որ միայն կընայ նպատակը քա-
ղաքական խնդրոց ընդհանուր շա-
հուց համեմատ լուծման : Եւրոպ թէ
ոչ, այն մասնաւոր տարրերն որք
աւելի խռովայոյր են, և իրենց ի-
րաւունքը դիմեն զինուք և արտաքին
օգնութեամբ պաշտպանել, յառաջ
պիտի անցնին ի ֆլա-
տալապատէր տարրաց :

Եւրոպական լրագիրք ոմանք անց-
եալները լուր տուած էին թէ Գերմա-
նացի նշանաւոր աստուածաբան Հայր
Տօէլինկէր վարդապետն, որ վատիկա-
նի դէմ հրատարակած գրութեամբն
հանրածանօթ եղած է, Պապին ան-
սխալականութիւնն ընդունելու և հը-
նազանդութիւն յայտնելու է : Հայր Տօ-
էլինկէր իւր մայիս 4 թուով մէկ նա-
մակաւն, որոյ մէկ մասը թան լրագ-
րին մէջ հրատարակուած է, կը հեր-
քէ այն լուրը :

Ամենասուտ զրոյցներ տարածե-
ցան, կըսէ, համայն Եւրոպիոյ մէջ ի-
բր թէ ես վատիկանի վիճակներուն
հնազանդած եմ կամ հնազանդել լսոր-
հած : Ալպանիոյ զրոյցի վատիկա-
տալու բան մ'ոչ ըրած եմ և ոչ ալ
զրամ : Լրագրաց ոմանք նշանակած
պարագայները ձրիապէս հնարուած
կեղծիք են միայն :

Ընդհակառակն, երեք շաբաթ
առաջ Սլիւսմայնէ Գայթունի լրագրին
մէջ նամակ մը հրատարակած եմ, ու-
րոյ մէջ կը յայտնէի թէ քիչ մը լուրջ
ուսումնական մշակութիւն ստացած
և ոչ մէկ անձ վատիկանի ընդհա-
րական ժողովին օրոշումները չկրնար
ընդունիլ :

Կենացոյ վերջին ինն տարիներուն
մէջ նորէն ուսման նիւթ ըրի ինձ
Պապերուն և ընդհանրական ժողովոց
պատմութեան վերաբերեալ ամեն
խնդիրները : Կրնամ ըսել թէ եկեղե-
ցական պատմութեան ամեն մանրա-
մասնութիւններն հետախուզած եմ,
և այս ամենուն արդիւնքն եղած է
վատիկանի վիճակներուն ստույթեան
բացարձակ հաստատութիւնն :

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս գնացած քաղաքայ ճանրու
ծախքը խորհուրդեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ յայտնի
կամ որ և ինչ պիտի լինի խորհուրդ-
—Տնարկէն պիտի լինի, որպէս
թիւ Սաւաթըրթըր Հատուկ իւ-
198, Նօրթ իսկ : Մարտի : Եւն
եակը :
Հանրու ծախքը խորհուրդեան նա-
մակ չընդունուի :
Չստուած նամակ, յորդաւ, և
եւ չեն տրուի :

«Ուստի, երբ կրտսի ինձ թէ այդ-
պիտի վարդապետութեանց համարու-
թեանը վրայ երդնուլ պէտք է, նոյն
զգացումը կը կրեմ երբոր պահանջէին
ինձմէ երդնուլ թէ 2 անգամ 2ը 3
կընէ : »
ՏԵԼԵԳՐԱԿԷ

Վիեննայի Տայլէ Գայթունի լրագ-
րին մէկ թղթակցին՝ ինքնաթիւքի զօ-
րավարին հետ ըրած մէկ տեսակցու-
թիւնը կը պատմէ, յորում զօրավարն
հետեւեալ խօսքերն ըսեր է :

«Ռուսական ընկերութիւնը կըր-
ծող չորեքոց դեղը սահմանադրական
գրութիւնն է, բայց Ռուսական խոր-
հրդարանականութիւն մը, և ոչ թէ
միւս Եւրոպական պետութեանց օ-
րինակին նման սահմանադրականու-
թիւն : Ռուսիոյ հիմնադրուած ռաւիկա-
վարական երկիր մ'է, և ըստ այնմ
պէտք է կառավարել : Եթէ մօտերս
տեղի ունեցած դաւադրութիւնը և
գաւառականութիւնը չլինէին, Չարն
արդէն նոր բարենորոգմանց ճան-
բուն մէջ մտած պիտի լինէր : Թե-
րևս վեց ամիս շանցած խորհրդարան
մը պիտի ունենամք, որ նախ պէտք
է կազմուի գաւառական ժողովոց
կողմանէ անուանելիք պատուիրակ-
ներէ, և այդ գաւառական ժողով-
ներն ալ աւելի ռաւիկափարական հի-
ման մը վրայ պէտք է վերակազմին : »

Լեւանթ Հէրալտ լրագիրն իւր և-
րելուան թուոյն մէջ հետեւեալ տեղե-
կութիւնները կուտայ Չէյթունի վրայ :

«Մեր առած տեղեկութեանց նա-
յելով, քանի մը շաբաթ առաջ Հա-
լէպի նահանգը զրկուած երկու տես-
չաց՝ այն է Մազհար փաշայի և Նուր-
եան էֆէնտիի պաշտօնին նպատակ-
ներէն մին ալ Չէյթունի մէջ առաջ-
ւան վիճակին վերահաստատութիւնն
է եղեր : Յայտնի է թէ վերջին խա-
չակրութեան և Հայաստանի թաղա-
ւորութեան անկումէն յետոյ, բազ-
մաթիւ քրիստոնեայ ժողովուրդ այս
լուսնային երկրին մէջ ապաստան
տրուած և յետոյ չորս աղքատահա-
րու կամ ցեղերու գաղութացութեան
պէս բան մը հիմնած էր, որոյ չորս
պէյեր կամ իշխաններ գլուխ եղած
էին : Այս գաղութացութեան Հալէպի և
Մարաշի գաղութներուն հետ ունեցած
յարաբերութիւնները մասնաւոր պայ-
մաններով կարգադրուած էին : Չէյ-
թունի քան հազար Հայ բնակիչները
կատարեալ ինքնօրինութիւն մը կը
վայելէին և տարին 25,000 զրէր տուրք
մը միայն կը վճարէին կառավարու-
թեան : 1862ին իրաց այս վիճակը փո-
փոխել և տուրքն աւելցնել ուզուե-
լով, սպառնալով թիւն ծագեցաւ,
կուրներ եղան, յետոյ պատգամաւո-
րութիւնով զրկուելով Նաթօլիս Գի-
գիւսնաղ խաչական միջնորդութիւն մը
տեղի ունեցաւ :

«Վախճանատու Սյու փաշային և Ն. Պոլսոյ գաղղիական դեպարտման Տր. Մու. թիւ մարտի 19-ին միջև կարգադրուած թիւ մեղաւ տուրքին փոքր ինչ յաւելում մը հիմաւորուելով, բայց այս վերջին ժամանակներու այդ կարգադրուած թիւնն իրեն չեղեալ նկատուած կը թուի: Տուրք վերստին աւելցուած մինչև 100,000 դրշի չափ: Օրմանեան զորքը Զէյթուն մտնուած, զոր այժմ գրաւած է: Միւս կողմանէ Զէյթունը յիւր կրնայ թէ իրենց վրայ դուռած տուրքերը չափազանց ծանր են, և թէ իրենք ազգաստ լինելով՝ անկարող են վճարելու: Մինչև իսկ կը պնդեն թէ իրենք այս վերջին ժամանակներու հանդարտ կեցած և զիւրենք թախանձանք իրեն հետ միանալու հրաւիրող խօսակցի Ահմետ փաշային ընդդիմացած լինելով, տրոց նուազեցուցանուած և իր վարձատրութեան մը կ'ապաստեն աւելի: Ինչպէս որ ըսինք, Մազհար փաշան և Նուր-հան Էֆենտին պաշտօն ունին Զէյթունի վիճակին տեղեկանալ և ժողովրդեան դանդաղանալը իրաւունք ընել՝ երբ օրինաւոր լինին:»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԶՄԱՆ ԻՌԻՆԵՐ

Այս առաւելու հասանքները:

Սիւնի 23 մայիս.	
Կրթ. ստղծ կը նկատուի թէ բարեկամական կարգադրութիւն մ'եղած է Եւրոպայ խանին հետ:	
Հաւով 23 մայիս.	
Վախկան կը փախչի իւր Ն. Պոլսոյ փոխանորդին կարեւորութիւնն աւելցնել իբրեւ պատրաստութիւն պաշտօնական ներկայացուցիչ մ'ունենալու:	
Փարիզ 23 մայիս.	
Գաղղիոյ պաշտօն իւր դրամագէտը 100ին 2 որդեց:	
Դիւնպրա 23 մայիս.	
Օտ. Բոնա. 41 1/4	
Փոս. 4863 44 3/4	
» 4869 44 3/4	
» 4871 47 5/8	
» 4872 22 3/8	
» 4873 42 3/8	
» Եղիար. 61 1/2	
Անգլ. Բոնա 98 15/16	
Փարիզ 23 մայիս.	
Օտ. Բոնա. 11,45	
Գաղղ. Բոնա. 50/0 80,70	
» » 50/0 85, 8	
» » 50/0 115,	

ՆԵՐՔԻՆ ԻՌԻՆԵՐ

Այսօր Սնդիկոյ թագուհւոյն ծընդդէմ տարեդարձը լինելով, Անգլիոյ դեսպանն իրենցը չքեղ հայկերոյթ մը պիտի տայ, որուն մայրաքաղաքս դառնող Սնդիկոյեցւոց երեւելիներն հրաւիրեալ են: Այս պատճառաւ մայրաքաղաքին նաւա-հանգիստը կեցող Օսմանեան պաշակ շաքերեալը դրօշներով զարդարուած է: Վերթթորթ թագուհին 4819 մա-յիս 12/24 ին ծնած լինելով, այսօր ճիշդ 60 տարեկան կը լինի:

Արդէն ծանուցած էինք թէ Արեւելեան Բումբէլի Եւրոպական յանձնախմբին երեքշաբթի աւուր նստին մէջ, տեղութեանց պատուիրակները փոխպէս մէջ իրենց կատարելիք պաշտօնին նկատմամբ իրենց կառավարութիւններէն ստացած նոր հրահանգներն իրարու հաղորդած են: Վաղը իւր այս առաւօտեան թուով կը ծանուցանէ թէ հրահանգներն իրարու անհամաձայն դառնալով, նոր գծաւարութիւն մը ծագեր է: Տեղութիւնք մի և նոյն նպատակն ունին, բայց տարբեր միջոցներ կ'առաջարկեն:

Պուլպարի Օսմանեան դործակա-տար փերթէվ Էֆենտին հինգշաբթի օրը մայրաքաղաքս եկաւ, և Մեծ-Եւպարքոսին հետ տեսակցութիւն մը:

Ներքէյեայ՝ տաղաքական դիւանին տնօրէնութեան պաշտօնը վարելը կըստ:

Հիւանանու կառավարիչ Բուս-թէմ փաշան հինգշաբթի օրը Վեհ-Սուլթանին ներկայանալով հրաժեշտը մատուց, և յետոյ իւր պաշտօնա-տեղին ուղեւորեցաւ Աւստրիական շոգեւանով:

Ելեմուրի բարաքման յանձնա-խմբին մէջ Գաղղիական պատուիրակ Պ. Թրիքու Եղիպտոսի Գաղղիական դործակատար անուանած և շուտով իւր նոր պաշտօնատեղին երթալու հը-րաման ստացած է Պ. Վատինիթեն:

Բ. Դուռն Եւրոպայի նահանգին մէջ դառնող զորքերը Վոլոս, այսինքն Հիլլենական սահմանաց մօտը փոխադրել որոշելով, քանի մ'արքունական շոգեւաններ Եւրոպայի տիրութեան:

Կիպրոսէն առնուած լուրերը գէշ են: Կղզւոյն մէջ մեծ երաշտութիւն կը տիրէ, որ այժմէն հնձոց երեք քա-ռորդն ողնացուցեր է: Արեւուն Վեր-մաթիւնէն երբեմն անհանդուրժելի լինելու չափ կը սատկանայ:

Հէվանի Հէրալտ լրագիրը կը ծա-նուցանէ թէ Բ. Դուռն բարենորոգ-մանց դործադրութեան նպատակ մը լինելու համար, Թուրքիոյ մէջ պե-տական վիճակահանութիւններ հաս-տատել որոշեր է, և թէ քանի մը ծրագիրը նախարարաց խորհրդա-ծովեան նիւթ եղած են:

Նեօլոյս լրագրին խօսքին նայե-լով, Կիրիսի ընդհանուր կառավա-րիչ Թովմատէս փաշային մայրաքա-ղաքս դառնալու նպատակը ինքնէ է եղեր Բ. Դուռնն որ կղզւոյն մաքա-կան հասցիքին կէսը տեղական ծա-խուց յատկանայ, վասն զի կղզւոյն ներկայ հասցիքը ծախքին չբաւեր: Ասկէ զատ Կիրիսի Աղգային Ժողովը չինած կազմակերպ կանոնադրին ինչ-ինչ կէտերուն վրայ բացատրութիւն պիտի տայ Բ. Դուռն:

Եւրոպական լրագիրը կը ծանու-ցանեն թէ Պաթմու մօտ Ահաբայի իսլամ բնակչաց մէկ մասը Ռուսական իշխանութեան դէմ ապստամբեր են և վրանին Ռուսական զօրք երթա-լով կ'աւանդուէր: Ապստամբը չկանալով դիմադրել էր քաղաքը և Օսմանեան հողը գաղթել որոշեր են: Հետեւաբար Ահաբայի, Արդվինի և Գապուլէթի իսլամ բնակիչք Պաթմու մ'կեցող Օսմանեան դործակատար Մուս-թաֆա փաշային միջոցաւ կը խնդրեն Բ. Դուռնն որ շոգեւաններ դրկէ զի-ւրենք փոխադրելու:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
Այս առաւելու բացուցուած	42,10
Կէս օրին	42,41
Բումբէլի երկրթուղի	Քր. 46,
Թղթաղարամ	Ժր. 4130
Մէջիտիի տարբերութիւն	6 45
Հինգնոց	45 40
Պղինձ	464

ԱՂԳԱՅԻՆ

Աղգային Ժողովն երէկ սահմա-նադրական տարեդիմոյն առաջին նիստն ըրաւ:

Ժամ շին Պատրիարքական փոխա-նորդ Գեւ. Մաթէեոս Եպիսկոպոս յանուն Ս. Պատրիարք Հօր փոխա-նորդաւոր առեանը բացաւ իմաս-

տալից ճառով մը, որոյ երկարու-թեանը սլաւոմաւա՛ հրատարակու-թիւնն երկուշաբթի աւուր թողու-կը պարտաւորմը:

Ճառին աւարտումէն յետոյ՝ վի-ճակաւ դադարեալ և հրաժարեալ աշխարհական և եկեղեցական երես-փոխանաց տեղ ընտրեալ նոր երես-փոխանաց ընտրական տեղեկագրերը կարգադրուելով՝ վաւերացման գոր-ծողութիւնը կատարեցաւ հետեւեալ կարգաւ:

Բերայէն ընտրեալ 9 երեսփոխան-ներէն հետեւեալ եօթն վաւերացան.

- Գ. Օտեան Էֆենտի
- Մերվիլէն »
- Մէլիթէն Գրիգոր »
- Յանձեան Արիկ »
- Մ'ոմեան Միքայէլ »
- Բաֆայէլեան »
- Գաղղեան Կրպոս »

Իսկ հետեւեալ երկուքն հրաժա-րած էին.

- Ռուբէն Էֆ. Եաղըճեան
- Աւետիս » Եօրտամեան

Գաւառ-փաշայէն՝ Գաւառ Էֆ. Չերաղ:

Մայր եկեղեցիէն՝ Աւետիս Էֆ. Կիրոտարեան

Յարութիւն » Մէրեմ-Գուլի

Միջաղիւղէն՝ Տիգրան Էֆ. Եուսուֆեան

Միւրիկ » Գաղանձեան

Աւետիս » Քօլօլեան

Նշան » Օտեան

Յակոբ » Նորատուհեան

Խաղաղիւղէն՝ Տօթ. Միհրան Արծրունի

Սարգիս Էֆ. Գալուքեան

Աթանաքիւնէն՝ Արապեան

Գաւառեօմիւրէն՝ Սեպուհ Էֆ. Թիւրապեան

Իւսկիւտար Ս. Խալէն՝ Տօթ. Շիմանեան

Աղեքսանդր Էֆ. Մէրեմ-Գուլի

Հիսարէն՝ Յովհաննէս Էֆ. Արշակունի

որոյ ընտրութեան տեղեկագիրը նա-խաքնութեան յղուեցաւ:

Կարինէն՝ Սիմոն պէյ Մաքսուտեան

Պակասնեւրուն տեղ ընտրեալ վեց եկեղեցական երեսփոխանք, որք նոյնպէս վաւերացան:

Տ. Վահան վրդ. Տ. Մինասեան

» Յակոբ » Աշտ

» Մահալ քհնյ. Տ. Սարգսեան

» Խորէն » Փէհլիվանեան

» Յովհաննէս » Միլեան

» Խղնաթիս վրդ. Շիւշեմեան

Յետոյ Մայր դիւանի անդամաց ընտրութեան ձեւնորոգելով, ա-տենապետ ընտրուեցան՝

Ս. Գրիգոր Էֆ. Օտեան

Բ. Տիգրան » Եուսուֆեան

Գ. Յարութիւն » Մէրեմ-Գուլի

Ատենաղ պիւր անուանեցան՝

Ս. Միլեան Էֆ. Մէլիթեան

Բ. Գաւառ » Չերաղ

Գ. Գաւառ » Մէլիթեան

Սոյն ընտրութեան ետեւ տատա-նը փոխեցաւ՝ գալ ուրախ գումար-ւելու որոշմամբ:

Տիգրանեկեանց տարիւր 1 թուով Պատրիարքարան եկած հետեւեալ պաշտօնագրին մէջ պատճենն ալ մեզ հաղորդուած լինելով՝ կը փութամը հրատարակել:

«Սղերդու վիճակի Պոթան նա-հանդի Տէհ գիւղին աւարաւութեան գէպըն՝ արդէն ծանօթ է: Գննիչ յանձնաժողովն հաստատեր է թէ 284,694 դրուշ փաս եղեր է գիւղին, բայց տակաւին անվստահեցանք:

և աւարեալ ապրանքներէն դանդա-ւածներն ալ տէրերուն չեն տրուած. իսկ չարադարձութեան հեղինակ նը-շանաւոր Համիտ աղան, որ չղթայա-կապ տեղի բերուած էր, չնորհիւ... մահապարտներուն բանտէն և չղթ-թայէն աղատելով՝ առ այժմ պար-տաւանաց բանտը դուռած է, և կըսուի թէ մօտեւոր պիտի արձակի: Թշուառ Տէհեցիք տեղա կը թափու-ուին և օգնութիւն կ'աշտակեն: Ուրովհետեւ հարստահարեալ գեղացի-ներուն իրաւունքը չարապաշտութե-ն և խոտապեղալ ապահովութիւնը, արդարութիւնն ու ազատութիւնը չգործադրուելէ զատ, աւուրք, «Ի-յանէ» և հին մնացորդ՝ որ չունին եղեր, խառն կը պահանջուի: Իսկ իրենք օրական հացի կարօտ խնդհողութիւնն առաւ իր թափառին:

Սղիւնու ներկայ դայմագամ Եւ-սին Էֆենտին՝ աւաղակապետները ժողովոյ անդամ և աւաղակներն ալ իրեն սպասաւոր ըրած է, ուստի և ամբաստանեալ չարադործներն ան-պատիւ կը մնան: Խեղճ Հայերն հոս եկեր կը բաղքեն, ունիւղութիւն չըլլար, կարծես թէ խորհրդով կը գործուին առ ի ջնջել զաղգո մեր թշուառ, նաեւ Հայազգիներէ՝ բու-նի երկիրներ կը դրուեն, և ուզած աւաղներուն թափուները թշուառներուն ձեռքն են: այն որ քաղաք եկեր է, ահա հոս է. հոն եղողները կը նեղ-ւին, ամեն մէկուն մէջմէկ պատճառ-բանելով կը բանտարկեն: ստակ կոր-զեն յանցանքի կարգէն չէ:

Այսպիսի խնդրաց համար տըր-ւած աղերսագրերը բնաւ նկատու-ղութեան չեն առնուիր: յառաջն թագրիկ կարեւորութիւն կը տրուէր, իսկ հիմա ան ալ գրեթէ ոչինչ է: Ներկայ կուսակալը նախորդը փառ-ուել կուտայ:

Նախորդին տեղա բերած տէրեպէ-յիները, որք հիմա տեղա կը գտնուին, 'ի չնորհս... ուսանց դատաս-տանի ենթարկուելու՝ աղատ պըտը-տելէ զատ՝ աղատելու խոտուած ալ ստացած են:

Թէ քաղաքին մէջ և թէ դաւառ-ները բնաւ ապահովութիւն չկայ, մարդապաշտութիւն, առեւանգու-թիւն, դողութիւն և յախաղակու-թիւն հասնապաղ կը գտնուին:

Լալագին կը գիմեն առաջնորդա-րան, բայց առաջնորդն ի՞նչ կրնայ ընել: Այսպէս ժողովուրդն անտա-նելի նեղութեան մէջ, կառավարու-թիւնն անկարելի և անտարբեր ար-դարացի բողոքներու, որով և քա-ղաքը չարադործաց:

Քաղաքին մօտ Անշու գիւղի քը-րիստոնեայիներէն քանին կը գտնա-կածուին Ապրիլու գիւղացի Թուր-քերէն, որք տեղացի խաղաղ փո-ղովոյ ինքնակող անդամ Չիլիզա-տէ Ալի Էֆենտի մարդիկն են: Քը-րիստոնեայիներէն մին իւր կրած սա-տիկ հարուածներէն երէկ մեռաւ: Ալի Էֆենտին իւր աղը եղութեամբը ջնջել ուղի ինչ կըրը, բայց քննու-թեամբ հաստատուեցաւ:

Արդեւ ճամբուն վրայ երկտա-սաղ մը զարնուելով մեռաւ:

Նորատու իկն մը Թուրքերն յա-վըտակեցան տեղա: սոյն գործողու-թեան միջոցին քոյրը շատ վախցաւ: Թէեւ կինն աղատեցինք, բայց քոյրը հիւանդացաւ, և Թուրք կանանց վերստին յարձակում ընելէն վախը սատկանալով մեռաւ:

Ահա վերջապէս ժողովուրդը շուտ-րած մնացած է և ինչ ընելիքը չը գիտեր:

Գրիկն դրուած նստակ մը կը ծա-նուցանէ թէ Հօր-Հօր կոչուած գիւ-

Մ. Խ.

